Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.2/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԷԴՈՒԱՐԴ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.62/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Էդուարդ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր-Մարաշ վարչական շրջանի, Ե.Չարենցի փողոցի 1-ին նրբանցքի հ.2/5 հասցեում, տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 319.68քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16042024-01-0243 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Նոր-Մարաշ վարչական շրջանի, Գ. Հովսեփյան փողոցի հ.62/15 հասցեում, /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07112024-01-0383 վկայական/ տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 319.34քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.2/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԷԴՈՒԱՐԴ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.62/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախագծով առաջարկվում է Էդուարդ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող Նորք-Մարաշ վարչական շրջանի, Ե. Չարենցի փողոցի 1-ին նրբանցքի հ.2/5 հասցեում, Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 319.68քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16042024-01-0243 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Նորք-Մարաշ վարչական շրջանի, Գ. Հովսեփյան փողոցի հ.62/15 հասցեում՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07112024-01-0383 վկայական/ տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 319.34քմ մակերեսով հողամասի հետ:

Հողամասերի փոխանակության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքացուն պատկանող հողամասը ունի բարդ ռելիեֆ, դեպի հողատարածք տանող ոչ բարենպաստ ճանապարհ և գտնվում է ամբողջությամբ հորակի մեջ: Սեփականատերը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ վերը նշված հասցեում բնակելի տուն կառուցելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու խնդրանքով, սակայն հաշվի առնելով հողամասի տեղադիրքը և բարդ ռելիեֆը՝ վարչական շրջանի կողմից հնարավոր չի եղել այն տրամադրել և բնակելի տուն կառուցելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու հայտերը մերժվել են:

Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ Ե. Չարենցի փողոցի 1-ին նրբանցքի հ.2/5 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Էդուարդ Այվազյանին պատկանող և Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Գ. Հովսեփյան փողոցի հ.62/15 հասցեում՝ գտնվող հողամասերի շուկայական արժեքները կազմում են համապատասխանաբար 33.400.000 ՀՀ դրամ և 33.365.000 ՀՀ դրամ:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ

հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ